

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

2.2. ՀՀ պետական պարտք (ներքին և արտաքին)

Ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տվյալների ՀՀ պետական պարտքը 30.06.2000թ. դրությամբ կազմել է 497359,88 մլն. դրամ, որից ներքին պարտքը (պետական կարճաժամկետ պարտատոմսեր և ՀՀ ԿԲ վարկեր) կազմել է 31865,41 մլն. դրամ, իսկ արտաքինը՝ (վարկեր՝ տրամադրված ՀՀ կառավարությանը, ՀՀ ԿԲ-ին և ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի երաշխիքներով) 465494,47¹ մլն. դրամ, կամ 849,613 մլն ԱՄՆ դոլար:

Ներքին պարտք

2000թ. հունիսի 30–ի դրությամբ շրջանառության մեջ են գտնվել 20865,45 մլն. դրամի պետական կարճաժամկետ պարտատոմսեր, ինչը 1999թ. դեկտեմբերի 31-ի համեմատ նվազել է 2313,14 մլն. դրամով, կամ 10,0 %-ով:

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կառուցվածքն ըստ ժամկետայնության (մլն. դրամ)

	1-10 շաբաթ	11-20 շաբաթ	21-30 շաբաթ	31-40 շաբաթ	41-52 շաբաթ	1-2 տարի	Ընդամենը
31.12.1999թ.	518.80	4103.90	9649.07	5314.17	3592.65	-	23178.59
31.03.2000թ.	-	3250,00	11350,00	4318,56	3007,10	2000,00	23925,66
30.06.2000թ	-	4050.00	8465.14	3843.21	4507.10	5000.00	25865.45

ՀՀ Կենտրոնական բանկի վարկային գծի՝ վերաձևակերպման արդյունքում տրամադրված արժեկտրոնային պարտատոմսերի ծավալը 30.06.2000թ. դրությամբ կազմել է 6000,0 մլն. դրամ՝ տարեսկզբի 8000,0 մլն. դրամի դիմաց:

2000թ. առաջին կիսամյակի ընթացքում պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունն ըստ ամիսների կազմել է.

Հունվար	42,2060%
Փետրվար	29,8276%
Մարտ	25,5441%
Ապրիլ	21,1022%
Մայիս	18,3934%
Հունիս	18,9972%

Ներքին պարտքի սպասարկման ծախսերը 2000թ. հունվար-հունիսին կազմել են 5517,1 մլն. դրամ:

¹ Արտաքին պարտքի տվյալները նախնական են և հաշվարկված են 30.06.2000թ. ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դոլարի հաշվարկային փոխարժեքով (547,89 դրամ):

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքը

	30.06.1999թ.		31.12.1999թ.		31.03.2000թ.		30.06.2000թ.	
	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ
Արտաքին պետական պարտք, ընդամենը	777.709	422.949	870.314	452.537	848.019	447.423	849.613	465.494
այդ թվում՝ ՀՀ կառավարության պարտք	562.981	306.171	632.865	329.071	627.390	331.017	631.273	345.868
որից՝ բազմակողմանի վարկային ծրագրեր	370.119	201.285	437.950	227.721	435.661	229.859	439.318	240.698
երկկողմանի վարկային ծրագրեր	192.862	104.886	194.915	101.350	191.729	101.158	191.955	105.170
ՀՀ կենտրոնական բանկի պարտք	178.637	97.150	201.231	104.634	193.305	101.989	189.672	103.919
Վարկեր՝ տրամադրված ՀՀ կառավարության և ԿԲ երաշխիքներով	35.436	19.272	29.736	15.462	19.536	10.308	19.536	10.704
Հատուկ ծրագրեր	0.655	0.356	6.482	3.370	7.788	4.109	9.132	5.003

ՀՀ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ 2000թ. առաջին կիսամյակում նվազել է 20.701 մլն ԱՄՆ դոլարով: Միաժամանակ, 2000թ. առաջին կիսամյակում ստացվել են վարկեր 10.293 մլն. ԱՄՆ դոլարի չափով և մարվել՝ 4.625 մլն. ԱՄՆ դոլարի չափով: Նշված տարբերությունը պայմանավորված է 1 SDR /1 USD փոխարժեքների տատանումներով:

Արտաքին պարտքի սպասարկման ծախսերը 2000թ. հունվար-հունիսին կազմել են 2463,0 մլն դրամ: